ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

   Արմեն Հայրապետյան

   Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ֆրանսիայի Հանրապետություն (ք. Փարիզ), 2023 թվականի մայիսի 19-24-ը

3. **Հրավիրող կողմը.**

   Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպություն (ԿԱՀԿ)

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   ԿԱՀԿ ազգային պատվիրակների համաշխարհային ասամբլեայի 90-րդ տարեկան գլխավոր նստաշրջանին մասնակցելու նպատակով

5. **Քննարկված թեմաները.**

   Քննարկվել են միջազգային ստանդարտներին, անվտանգ միջազգային առևտրի հեշտացման, աշխարհում հակամանրէային դիմադրողականության, բարձր ախտածնությամբ թռչնագրիպի վիրուսին առնչվող թեմաները: ԿԱՀԿ Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի պատվիրակների, Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակի ղեկավարի հետ քննարկվել են տարածաշրջանում շրջանառվող կենդանիների դաբաղի վիրուսի SAT-2 շտամի Հայաստանի Հանրապետություն ներթափանցման ռիսկի, տվյալ շտամի պատվաստանյութի, Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն կաթնամթերքի արտահանման և սպանդանոցների հետ կապված թեմաները: ԿԱՀԿ Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակի ղեկավարի հետ քննարկվել են տարածաշրջանում կենդանիների անասնահամաճարակային իրավիճակին առնչվող թեմաները:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   ԿԱՀԿ Ռուսաստանի Դաշնության պատվիրակ, Ռուսաստանի Դաշնության անասնաբուժական և բուսասանիտարական հսկողության դաշնային ծառայության (Ռոսսելխոզնադզոր) ղեկավարի տեղակալ Կ. Սավենկովի հետ քննարկվել են ինչպես

Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն կաթնամթերքի արտահանմանն առնչվող, այնպես էլ տարածաշրջանում շրջանառվող կենդանիների դաբաղի վիրուսի SAT-2 շտամի Հայաստանի Հանրապետություն ներթափանցման ռիսկի հետ կապված տվյալ շտամի պատվաստանյութի ձեռք բերմանն առնչվող հարցերը: Վրաստանի ԿԱՀԿ պատվիրակ Վ. Բասիլաձեի և ԵՄ այլ երկրների ԿԱՀԿ պատվիրակների հետ քննարկվել են սպանդանոցների գործունեությանն առնչվող հարցերը՝ մասնավորապես պետություն-մասնավոր սեկտոր համագործակցությանն ուղղված հարցերը: ԿԱՀԿ Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակի ղեկավար Բ. Պլավշիչի հետ քննարկվել են տարածաշրջանում կենդանիների անասնահամաճարակային իրավիճակին առնչվող հարցերը, ինչպես նաև կենդանիների մերձսահմանային հիվանդությունների ներթափանցման ռիսկերին առնչվող հարցերը:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Ռուսաստանի Դաշնության անասնաբուժական և բուսասանիտարական հսկողության դաշնային ծառայության (Ռոսսելխոզնադզոր) ղեկավարի տեղակալ Կ. Սավենկովի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել դաբաղի SAT-2 շտամի պատվաստանյութ ձեռք բերելու ուղղությամբ օպերատիվ կերպով կազմակերպել աշխատանքները, մասնավորապես Հայաստանի Հանրապետության կողմից պատվիրված պատվաստանյութն ակնկալվում է հնարավորինս շուտ մատակարարել:

Վրաստանի ԿԱՀԿ պատվիրակ Վ. Բասիլաձեի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել սույն թվականի սեպտեմբերին Հայաստանի Հանրապետությունում Վրաստանի սննդամթերքի ազգային գործակալության և Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի միջև փոխըմբռնման հուշագրի ստորագրման վերաբերյալ («ԼԵՓԼ» սննդամթերքի ազգային գործակալության, «ԼԵՓԼ» գյուղատնտեսության պետական լաբորատորիայի, Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության միջև գործընկերության զարգացումն է՝ փոխադարձ հարգանքի և փոխըմբռնման ոգով հավասար իրավունքներով համագործակցություն հաստատելու նպատակով):

8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

9. Ստորագրությունը, ամսաթիվը. 26 մայիսի 2023թ.

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը Վարչապետի աշխատակազմի ղեկավարի 17.05.2023թ. N 576-Ա հրաման

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)
Արմեն Հայրապետյան, մարմնի ղեկավար
(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը **Ֆրանսիայի Հանրապետություն (Փարիզ)**

5. Գործուղման ժամկետները **2023 թվականի մայիսի 19-24**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

■ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Արմեն Հայրապետյան*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	Էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	278082	278,08
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	168 EUR	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	69760,3	348,80
	Օրերի քանակը	5	
	Ընդամենը (դրամ)		
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	127 EUR	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	53153,3	318,92
	Օրերի քանակը	6	
	Ընդամենը (դրամ)		
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (*նկարագրել*)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)			945,80

Ստորագրությունը, ամսաթիվը: